ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀԱՅ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(«Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» 7-րդ միջազգային գիտաժողով)

ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 11-13-ը Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում կայացավ «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» թեմայով՝ արդեն ավանդական դարձած 7-րդ միջազգային գիտաժողովը: Այն առանձնանում էր նախորդներից ներկայացուցչականությամբ: Երևան էին ժամանել ավելի քան 14 երկրների (Ռուսաստան, ԱՄՆ, Վրաստան, Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Ուկրաինա, Կանադա, Իրան և այլն) 70 առաջատար համալսարանների ավելի քան 300 մասնագետներ, որոնց թվում էին գիտությունների 20 դոկտորներ և հոգեբանական գիտությունների 80 թեկնածուներ, դոցենտներ և պրոֆեսորներ: Նրանք ներկայացնում էին, մասնավորապես, Մոսկվայի պետական, Մոնրեալի, Կանադայի Կոնկորդիայի, Կենտրոնական Կատալոնիայի, Կոլումբիայի, Նյու Յորքի Ֆորդհեմի, Սանկտ Պետերբուրգի պետական, Նուր-Սուլթանի Ռուս-հայկական, Թբիլիսիի պետական, Ավինյոնի և այլ համալսարաններ:

Ավանդական դարձած «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նպատակն է ընդլայնել հոգեբանների գիտական մտահորիզոնը, հնարավորություն տալ անմիջականորեն առնչվելու նոր գաղափարակիրների հետ, քննարկելու տեսական, կիրառական և փորձարարական հոգեբանության ոլորտում կարևոր հարցեր, ինչպես նաև՝ քննարկումների միջոցով բարձրաձայնել գիտնականներին հուզող մասնագիտական խնդիրները և փորձել գտնել հասարակական զարգացումների մարտահրավերներին համարժեք պատասխաններ:

Գիտաժողովին ակտիվորեն մասնակցեցին նաև Հայաստանի բուհերը՝ Երևանի պետական, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու», Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական, Հայ-ռուսական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանները, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազո-

տությունների ինստիտուտը, ՀՀ պետական կառավարման ակադեմիան, Վանաձորի Հ. Թումանյանի անվան հայկական պետական մանկավաժական ինստիտուտը, Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիան և այլն։

Գիտաժողովը մեկնարկեց ընդլայնված նստաշրջանով, որի ընթացքում հյուրերին ողջունեցին կազմկոմիտեի նախագահ, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ Հրանտ Ավանեսյանն ու Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Էլինա Ասրիյանը։ Նրանք նշեցին, որ միջազգային գիտաժողովն առանձնահատուկ նշանակություն և կարևորություն ունի, քանի որ տեղի է ունենում ԵՊՀ 100-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում։

Գիտաժողովի մեկնարկին առանցքային զեկուցումներով հանդես եկան անվանի գիտնականներ, որոնք անդրադարձան հետևյալ հիմնախնդիրներին.

- հրավիրված ուղերձ. 140 տարի անց, 12 անակնկալ փաստ միջազգային հոգեբանության մասին (Հ. Չ. Թաքուշյան, ԱՄՆ),
- կրթական և մասնագիտական նպատակների գիտակցված ինքնակարգավորում (Վ. Ի. Մորոսանովա, Ռուսաստան),
- գույնի ձևավորման վերաբերյալ Պլատոնի և Դեմոկրիտի տեսակետների արդի գնահատանքը (Ի. Դարչիա, Վրաստան),
- սթրեսի նկատմամբ դիրքորոշման շտկման հարցի շուրջ (Ռ. Սակվարելիձե, Թ. Բժալավա, Վրաստան),
- կատեգորիալ տարածություններր գիտակցության հիմնախնդրի առաջադրման և լուծման մեջ (Գ. Վ. Ակոպով, Ռուսաստան),
- կարո՞ղ եք սովորեցնել «T.E.A.C.H.» դեռահասներին (Մ. Կ. Կիլիչի, ԱՄՆ),
- մարդկային ներուժի հոգեբանական գնահատման համակարգի համարժեքության և գործնականության հիմնախնդիրը (Հ. Մ. Ավանեսյան, Հայաստան)։

Ընդլայնված նստաշրջանի ավարտին ԱՄՆ-ից ժամանած պատվիրակությունը ներկայացրեց Հայկական վարքաբանական միության գործունեությունը Սփյուռքում՝ մասնավորապես.

- Իմաստալից աշխարհ. 30 տարի մարդասիրական օգնություն Հայաստանում և աշխարհում, ներողամտություն և իմաստավորում (հոգեբանության դոկտոր Ա. Գալայձեան)։
- Հայկական վարքաբանական գիտության միավորում։ 30 տարի անց (հոգեբանության դոկտոր Հ. Թաքուշյան)։
- Հոգեկան առողջության հայ-ամերիկյան միավորումը Կալիֆոռնիայում. ծագումը, առաքելությունը, արժեքները, նպատակները, ռազմավարությունները և ձեռքբերումները (հոգեբանության դոկտոր Շ. Քաֆթարյան)։

ԵՊՀ 100-ամյակի շրջանակներում անցկացվեց «Փիլիսոփայության

ժամանակակից հիմնախնդիրներ. արդի մարտահրավերներ» խորագրով հատուկ նստաշրջան, որի պատվավոր հյուրն էր Վրաստանից ժամանած փ.գ.դ. Դարչիան: Մասնակցում էին նաև ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնների դասախոսներ, ասպիրանտներ և մագիստրոսներ: Տեսակետներ հնչեցին ճշմարտության էությունը սահմանելու և բացատրելու անհնարինության, հռետորիկայի ավանդական և ժամանակակից ոլորտների, էթիկայի էսթետիզացման թեմաների շուրջ:

«Ընդհանուր հոգեբանություն և մեթոդաբանություն» նստաշրջանում քննարկվեցին այնպիսի արդիական հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ Հայաստանում տրանսցենդենտալ դպրոցի ստեղծման հեռանկարները, քննադատական ազգագրությունը հոգեբանության մեջ, իրադարձությունների հայացքի և հիշողության անհատական առանձնահատկությունները, դիրքորոշումների շտկողական ազդեցությունը հավանական դատողությունների վրա և այլն (վարողներ՝ հ.գ.դ. Ի. Վ. Իմեդաձեն Վրաստան, հ.գ.դ. Գ. Վ. Ակոպով՝ Ռուսաստան):

«Անձի հոգեբանություն և սոցիալ-մշակութային միջավայր» նստաշրջանում ներկայացված զեկույցները հիմնականում վերաբերում էին հայ և ռուս դեռահասների միջմշակութային հաղորդակցության դժվարությունները հաղթահարելու ուղիներ գտնելուն, Հայաստանում թավշյա հեղափոխության՝ հոգեբանական և քաղաքական-տեխնոլոգիական դիտանկյուններին, անձի ստեղծարարության զարգացման հոգեբանական առանձնահատկություններին և այլն (վարողներ՝ հ.գ.դ. Գ. Ա. Նիջարաձե՝ Վրաստան, հ.գ.թ., դոցենտ Հ. Ա. Տաթևյան, հ.գ.թ., դոցենտ Հ. Ռ. Հովհաննիսյան՝ Հայաստան):

«Կլինիկական հոգեբանություն» նստաշրջանում ներկայացված զեկուցումներից շատերը նվիրված էին արդյունավետ հոգեթերապիայի որոնումներին, տեսողության խնդիրներով տարեցների կյանքի ռազմավարությանը, բարոյականության նեյրոֆիզիոլոգիական հիմքերին, ինտերնետից կախվածության ռիսկի ենթարկված դեռահասների անհատական առանձնահատկություններին և այլն (վարողներ՝ հ.գ.դ. Չ. Փիլավյան՝ ԱՄՆ, հ.գ.թ., պրոֆ. Ս. Ն. Ենիկոլոպովը՝ Ռուսաստան, հ.գ.թ. Խ. Վ. Գասպարյան՝ Հայաստան):

Նստաշրջաններից մեկի ընթացքում տեղի ունեցավ «Հայաստանը սոցիալ-մշակութային պրակտիկաներում՝ ժառանգություն և արդիականություն» թեմայով կլոր սեղան՝ Սամարայից ժամանած մշակութաբանության դոկտոր, պրոֆեսոր Վ. Ի. Իոնեսովի և համազեկուցող, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Վ. Ակոպովի մասնակցությամբ:

«Կրթության և զարգացման հոգեբանություն» նստաշրջանում քննարկվեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ստեղծագործ ուսանողների ուսումնական մոտիվացիայի և կյանքից բավարարվածություն ստանալու յուրահատկությունները, քննադատական մտածողությամբ

ավագ դպրոցականների անձնային որակներր, ուսուցիչների կողմից գործադրվող հոգեբանական բռնության ազդեցությունը դպրոցականների ուսումնական մոտիվացիայի վրա և այլն:

«Սթրեսի հոգեբանություն և ինքնակարգավորում» նստաշրջանր նվիրված էր ընտանիքում ֆիզիկական բռնության ենթարկված դեռահասների հուզական ոլորտի առանձնահատկություններին, բնածին և ձեռքբերովի հաշմանդամությանը, ինչպես նաև սթրեսի հաղթահարման ուղիներին:

«Կառավարման և մասնագիտական գործունեության հոգեբանություն» նստաշրջանն առանձնացավ հիմնախնդիրների բազմազանությամբ: Այստեղ քննարկվեցին այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ Ուկրաինայի արևելքում պատերազմական գոտում աշխատող մանկավարժների «մասնագիտական այրման համախտանիշի» (синдром эмоционального выгорания) պատճառներր և վերականգնման հնարավորությունները, կառավարչի անձնային որակների գնահատման չափանիշներր փոխակերպվող հասարակությունում և այլն:

«Սպորտի հոգեբանություն, առողջություն և բարեկեցություն» նստաշրջանում բարձրացվեցին առողջ ապրելակերպի վերաբերյալ ամենատարբեր հարցերր, քննարկվեցին մրցակցային տագնապի դրսևորման առանձնահատկություններր մարզիկների շրջանում, երիտասարդների մոտիվացիոն և արժեքային վերաբերմունքը իրենց առողջությանը և ֆիզիկական կուլտուրային:

Գիտաժողովին ներկայացված զեկուցումները հրատարակվեցին թեզիսների ժողովածուում, իսկ հոդվածները՝ «Արդի հոգեբանություն» գիտական հանդեսի հերթական համարներում[1]: Այս տարիներին բոլոր գիտաժողովների նյութերը մշտապես լուսաբանվել են ազգային և միջազգային գիտական հարթակներում՝ «Սանկտ Պետերբուրգի համալսարանի բանբեր», «Եվրասիական համալսարանական ասոցիացիայի լրագիր», «Գիտաչափական տվյալների հետազոտական հարթակ» և այլ[2]:

Հարկ է նշել, որ հոկտեմբերի 10-ին ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում ընդհանուր հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ նշվեց նաև Հոգեկան առողջության միջազգային օրը, որն այս տարի Առողջապահության համաշխարհային կազմակերպությունր (ԱՀԿ)[3] նվիրել էր ինքնասպանությունների կանխարգելմանր: Միջոցառման հյուրերն էին «Meaningfull Word», «ASP and Psy Chi» միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: Ներկա էին նաև ԱԻՆ-ի, առողջապահության նախարարության, «Ապագա» հոգե-

[1] Տե՛ս «Արդի հոգեբանություն» № 2(4) http://psyarm.com/?page_id=623 և «Արդի հոգեբանություն» № 2(5) http://psyarm.com/?page_id=648

[2] Տե՛ս https://cyberleninka.ru/journal/n/vestnik-sankt-peterburgskogo-universiteta-psihologiya?i=1048801; http://www.eau-msu.ru/news/view/282, https://istina.msu.ru/collections/11646694/

[3] Տե՛ս World Mental Health Day 2019: focus on suicide prevention// https://www.who.int/

բանական կենտրոնի ներկայացուցիչներ։ Միջոցառման ընթացքում տեղի ունեցավ «Meaningful World» կազմակերպության հիմնադիր, դոկտոր Անի Գալայձեանի «Անմոռուկ» գրքի շնորհանդեսը (“Forget Me NOT” գիրքը անգլերեն հրատարակվել է 2017 թվականին ԱՄՆ-ում)։ Այն նվիրված է ցեղասպանությունը վերապրած ընտանիքներին. նկարագրված են հորիզոնական բռնության, տրավմայի ժառանգական փոխանցման և բուժման հայեցակարգերը, որոնք ինքնախնամքի բաղադրիչ մասեր են։ Գիրքը թարգմանել և խմբագրել են ԵՊՀ «Փորձարարական հոգեբանություն» գ/հ լաբորատորիայի աշխատակիցները։

Գիտաժողովի շրջանակներում վերջին օրը վարպետաց դասեր անցկացրին արտասահմանյան առաջատար մասնագետները, որոնց մասնակցեցին շուրջ 120 երիտասարդ գիտնականներ, ասպիրանտներ, մագիստրանտներ և բակալավրիատի բարձր կուրսերի ուսանողներ։ Վարպետաց դասերի թեմաներն էին՝ «7 քայլ ինտեգրատիվ բուժական մոդել՝ ճամփորդություն դեպի առողջություն, երջանկություն և խաղաղություն» (Ա. Գալայձեան, ԱՄՆ), «Խուճապային գրոհներ. իրավիճակի վերլուծություն» (Հ. Հովսեփյան, Գերմանիա), «Վնասվածքների հետևանքների վերացումը ԴՊԴԳ-ի հոգեբանական մեթոդով» (Ի. Պոպովա, Բելառուս)։

Գիտաժողովի ձեռքբերումներից են գիտական կապերի հաստատումը, ուսանողների կրթական ծրագրերի միջազգայնացումը, հայտնի գիտնականների ներգրավումը առաջիկա գիտական միջոցառումներին, ինչպես նաև արտասահմանյան առաջատար համալսարանների հետ համագործակցությունը, որը հնարավորություն կտա հայ ուսանողներին կրթական բարձունքների հասնել այլ երկրների համալսարաններում։

Հարկ ենք համարում առանձնացնել երկու կարևոր համագործակցություն։ Առաջինը 2007 թվականին հոգեբանության հիմնախնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովի շրջանակներում հղացած մի նախաձեռնություն էր, որը միտված էր գտնելու և համախմբելու աշխարհում հայտնի հայազգի հոգեբան գիտնականներին։ Այսօր այն արդեն ունի լավ արդյունքներ, որոնցից է 2019 թվականին կազմակերպված «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» VII միջազգային գիտաժողովը, որը համախմբել էր աշխարհի հայ հոգեբաններին՝ կարևորելով Հայաստանի Հանրապետությունում և հայկական սփյուռքում հոգեբանական գիտության համաչափ զարգացումը։ Այդ նպատակով հանդես ենք եկել հայ հոգեբանների միասնական հարթակի ստեղծման նախաձեռնությամբ, որի հռչակագիրը ստորագրել են բազմաթիվ ճանաչված գիտնականներ՝ կարևորելով մասնագիտական համագործակցության և գիտական ծրագրերի շտեմարան ստեղծելը, որը կամրացնի կապը հայրենիքի հետ, ինչպես նաև Հայաստանի հոգեբանների համար միջազգային ասպարեզում ինքնա-

դրսևորվելու և կայանալու հնարավորություն կտա։

Հաջորդ ձեռքբերումը PSY CHI-ն է, որի նպատակն է նպաստել ուսանողների գիտական նվաճումներին՝ գիտաժողովների, հրապարակումների, պարգևների և ծրագրերի, ինչպես նաև նպատակային դրամաշնորհների հատկացման միջոցով։ Այն հոգեբանության միջազգային պատվավոր միություն է, որին անդամագրված են ԱՄՆ-ի և այլ երկրների հոգեբանները։

7-րդ գիտաժողովի արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ներկայացված գիտական հիմնահարցերի կարգավիճակը համապատասխանում է մարդու առջև ծառացած ժամանակակից մարտահրավերներին։

Հոգեբանական գիտության զարգացման և դրանում առկա հիմնախնդիրների հանրայնացման համատեքստում ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտնականները մշտապես կարևորվել են գիտական բանավեճերի, հրապարակային քննարկումների, գիտագործնական սեմինարների, գիտաժողովների շարունակական կազմակերպումը։

Գիտական նստաշրջանների և գործնական սեմինարների ընտրված թեմաները և արդյունքները, իհարկե, կիրառական արժեք ունեն ուսումնական հաստատությունների, հոգեբանական կենտրոնների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների համար։ Գիտաժողովի հարցերի շրջանակը լայն էր, ուստի դժվար էր երեք օրվա ընթացքում մանրակրկիտ քննարկել ամբողջը։ Մենք հույս ունենք, որ տասներկու տարվա փորձը վստահություն ներշնչող է, և մեր գիտաժողովը նպաստում է միջազգային գիտական հարաբերությունների, գործնական հիմնարար նախադրյալների ստեղծմանը, ինչպես նաև նոր համատեղ ծրագրերի ծնունդին։